ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/0889/02/25 ք. Երևան
13 Փետրվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ՀՐՇԵՋ ՇԱՀ-ԱՐ» ՍՊ ընկերության և «ՍԱՇԻԿ ԵՎ ՍԵՎԱԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

Դատարանի 06.02.2025թվականի որոշմամբ վերադարձվել է «ՀՐՇԵՋ ՇԱՀ-ԱՐ» ՍՊ ընկերության և «ՍԱՇԻԿ ԵՎ ՍԵՎԱԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՇՁԲ-25-10/9» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 09.01.2025թվականի N 2 արձանագրության 1.5 կետով Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով կայացրած որոշումն անվավեր ճանաչելու և Մասնակցի ներկայացրած հայտը բավարար գնահատելու պահանջների մասին:

Հայցվորները վերացրել են հայցադիմումի թերությունները և այն կրկին ներկայացրել դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ

միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարությունից պետք է պահանջել ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՇՁԲ-25-10/9» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 09.01.2025թվականի N 2 արձանագրության 1.5 կետով Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով կայացրած որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ՀՐՇԵՁ ՇԱՀ-ԱՐ» ՍՊ ընկերության և «ՍԱՇԻԿ ԵՎ ՍԵՎԱԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՇՁԲ-25-10/9» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 09.01.2025թվականի N 2 արձանագրության 1.5 կետով Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով կայացրած որոշումն անվավեր ճանաչելու և Մասնակցի ներկայացրած հայտը բավարար գնահատելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՇՁԲ-25-10/9» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 09.01.2025թվականի N 2 արձանագրության 1.5 կետով Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով կայացրած որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am